

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՕՐԵՆՔԸ

«ՎԱՐՉԱԿԱՆ ԻՐԱՎԱԽԱԽՏՈՒՄՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԱՆՍԳՐՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ»

Հոդված 1. «Վարչական իրավախախտումների վերաբերյալ» Հայաստանի Հանրապետության 1985 թվականի դեկտեմբերի 6-ի օրենսգրքի (այսուհետ՝ Օրենսգիրք)՝ 158-րդ հոդվածը 31-րդ պարբերությունից հետո լրացնել նոր՝ 32-րդ պարբերությամբ

«Գազալցակայանում ավտոտրանսպորտային միջոցների վրա սահմանված կարգով տեղադրված գազաբալոնների հերթական վկայագրման ժամկետը նշող կտրոն չունեցող կամ ժամկետանց կտրոնով ավտոտրանսպորտային միջոցի լցավորումը

Գազաբալոնի հերթական վկայագրման ժամկետը նշող կտրոն չունեցող կամ ժամկետանց կտրոնով ավտոտրանսպորտային միջոցի լցավորումը՝

առաջացնում է տուգանքի նշանակում՝ գազալցավորման կայանի ղեկավարի նկատմամբ՝ սահմանված նվազագույն աշխատավարձի երկուհարյուրապատիկի չափով:»:

Հոդված 2. Օրենսգրքի 244⁷ հոդվածի 1-ին պարբերությունում «... և քսանչորսերորդ մասերով, ...» բառերը փոխարինել «..., քսանչորսերորդ և երեսուներկուերորդ մասերով... » բառերով:

Հոդված 3. Սույն օրենքը ուժի մեջ է մտնում 2014 թվականի հունվարի 1-ից:

ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

«Վարչական իրավախախտումների վերաբերյալ» Հայաստանի Հանրապետության օրենսգրքում լրացում և փոփոխություն կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի

1. Իրավական ակտի անհրաժեշտությունը (նպատակը).

«Վարչական իրավախախտումների վերաբերյալ» Հայաստանի Հանրապետության օրենսգրքում լրացում և փոփոխություն կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծով առաջարկվում է՝ գազալցակայանի ղեկավարի նկատմամբ սահմանել վարչական պատասխանատվություն չվկայագրված գազաբալոններով շահագործվող ավտոտրանսպորտային միջոցի գազալցավորման հանմար: Օրենսգրքում առաջարկվող լրացման նպատակն է՝ թույլ չտալ գազաբալոնային ավտոտրանսպորտային միջոցների վարորդներին շահագործելու վկայագրման ժամկետի մեջ չգտնվող գազաբալոններ, որը էապես կնվազեցնի գազալցակայաններում հաճախակի կրկնվող պատահարները:

2. Ընթացիկ իրավիճակը և խնդիրները.

Հայաստանի Հանրապետությունում ավտոտրանսպորտային միջոցների վրա գազավառելիքային սնման համակարգեր սկսել են տեղադրել դեռևս ԽՍՀՄ տարիներից, շատ տրանսպորտային միջոցների վրա դեռևս շահագործվում են անցած դարի 80-ականների վերջերին տեղադրված գազաբալոններ, չկա հստակ համեռվածության, որ այդ գազաբալոնները սահմանված կարգով և ժամանակին վկայագրվել են, այսինքն չենք կարող ասել արդյոք դրանք շահագործման համար պիտանի և անվտանգ են: Եթե ընդունվում է ներկայացված նախագծով առաջարկվող լրացումը, վարչական պատասխանատվության երթարկվելու վտանգը կստիպի գազալցակայանի ղեկավարին, որ խիստ հսկողություն սահմանի գազալցավորման ներկայացված ավտոտրանսպորտային միջոցների գազաբալոնների վկայագրմանը, իսկ երբ գազալցակայանում չվկայագրված գազաբալոններով լրակազմված ավտոտրանսպորտային միջոցները չեն սպասարկվի դա իր հերթին կստիպի դրանց տիրապետողներին գործող նորմերով սահմանված ժամկետներում իրենց տիրապետության տակ գտնվող տրանսպորտային միջոցները ներկայացնել գազաբալոնների վկայագրման:

3. Տվյալ բնագավառում իրականացվող քաղաքականությունը.

«Հ տրանսպորտի և կապի նախարարությունը հանդիսանալով ոլորտի լիազոր մարմին տրանսպորտի ոլորտը կարգավորող իրավական ակտերը մշակելիս պարտավոր է օրենսդրորեն ապահովել գազաբալոնային սնման համակարգերով լրակազմված ավտոտրանսպորտային միջոցների անվտանգ շահագործման պայմանները:

4. Կարգավորման նպատակը և բնույթը

Ապահովել գազավառելիքային սնման համակարգերով լրակազմված ավտոտրանսպորտային միջոցների անվտանգ շահագործումը:

5. Նախագծի մշակման գործընթացում ներգրավված ինստիտուտները և անձինք

Որոշման նախագիծը մշակել է ՀՀ տրանսպորտի և կապի նախարարության աշխատակազմի տրանսպորտի վարչությունը:

6. Ակնկալվող արդյունքը.

Օրենքի նախագծի ընդունման դեպքում ակնկալվում է Հայաստանի Հանրապետությունում սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազով շահագործվող ավտոտրանսպորտային միջոցների անվտանգ շահագործման մակարդակի բարձրացում, ինչպես նաև դրանց հետ կապված պատահարների նվազեցում:

Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք

« Վարչական իրավախախտումների վերաբերյալ» Հայաստանի Հանրապետության օրենսգրքում լրացում և փոփոխություն կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի ընդունման դեպքում այլ իրավական ակտերում փոփոխություններ և լրացումներ կատարելու անհրաժեշտության վերաբերյալ

1. Այլ իրավական ակտերում փոփոխությունների և (կամ) լրացումների անհրաժեշտությունը.

«Վարչական իրավախախտումների վերաբերյալ» Հայաստանի Հանրապետության օրենսգրքում լրացում և փոփոխություն կատարելու մասին » Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի ընդունման կապակցությամբ այլ իրավական ակտերում փոփոխություններ կամ լրացումներ կատարելու անհրաժեշտություն չի առաջանում:

2. Միջազգային պայմանագրերով ստանձնած պարտավորությունների հետ համապատասխանությունը.

Օրենքի նախագծով նախատեսվող լրացումը Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերին չի հակասում:

3. Այլ տեղեկություններ.

Չկան

Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք

« Վարչական իրավախախտումների վերաբերյալ» Հայաստանի Հանրապետության օրենսգրքում լրացում և փոփոխություն կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի նախագծմանը և քննարկմանը հասարակության մասնակցության մասին

1. Հասարակությանը նախագծի վերաբերյալ իրազեկումը.

Նախագիծը ներկայացվել է շահագրգիռ մարմինների քննարկմանը ինչպես նաև տեղադրվել է ՀՀ տրանսպորտի և կապի նախարարության ինտերնետային կայքում(www. mtc.am)

2. Հասարակության մասնակցությունը նախագծմանը և/կամ քննարկումներին.

Նախագծի վերաբերյալ հասարակական քննարկումներ չեն իրականացվել:

Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք

« Վարչական իրավախախտումների վերաբերյալ» Հայաստանի Հանրապետության օրենսգրքում լրացում և փոփոխություն կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագիծը ընդունելու դեպքում պետական բյուջեում կամ տեղական ինքնակառավարման մարմինների բյուջեներում ծախսերի և եկամուտների էական ավելացումների կամ նվազեցումների մասին

Պետական բյուջեում կամ տեղական ինքնակառավարման մարմինների բյուջեների վրա ազդեցությունը

Ցուցանիշներ	ընթացիկ (n-րդ) տարի	Հաջորդող 3 տարիները		
		n +1	n +2	n +3

	Ըստ n-րդ տարվա պետական բյուջեի	փոխությունը n-րդ տարվա պետական բյուջեի համեմատ	Փոփոխությունն ընթացիկ տարվա համեմատ (n)	Փոփոխությունն ընթացիկ տարվա համեմատ (n)	Փոփոխությունն ընթացիկ տարվա համեմատ (n)
1	2	3	4	5	6
1. Եկամուտներ					
1.1. պետական բյուջեի եկամուտներ					
1.2. ՏԻՄ եկամուտներ					
2. Ծախսեր					
2.1. պետական բյուջեի ծախսեր					
2.2. ՏԻՄ բյուջեի ծախսեր					
3. Ֆիսկալ ազդեցության գնահատական					
3.1. պետական բյուջե					
3.3. ՏԻՄ բյուջե					
4. Եկամուտների և ծախսերի հաշվարկների մանրամասն ներկայացում (անհրաժեշտության դեպքում կարող է ներկայացվել հավելվածի տեսքով):	Նախագծի ընդունման կապակցությամբ պետական բյուջեի և տեղական ինքնակառավարման մարմինների եկամուտների էական ավելացում կամ նվազեցում չի նախատեսվում:				
4.1. Եկամուտների գնահատում					
4.2. Ծախսերի գնահատում					
5. Այլ տեղեկություններ (եթե այդպիսիք առկա են)					